# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 13 | Սեպտեմբեր | 2018 թ. |
| **[4] Առաքման ամսաթիվ** | | |
| 13 | Սեպտեմբեր | 2018 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 1748553534 |
| **Ճշգրտվող հաշիվ վավերագրի** | |
| Սերիա | Համար |
| | |
| **Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ** | |
| | |

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| 18 Հունվար, 2018 թ. | |

**[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)**

**[7.1] ՀԴՄ կտրոնի համար**

| Արտադրանք, ապրանք առաքող անձի | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 6 9 0 2 0 8 7 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 6 9 0 2 0 8 7 / 1 |
| [10] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [11] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ — N 1570015001210100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [14] Լրացուցիչ տվյալներ | |

| Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի | |
|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [18] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834 |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [20] Լրացուցիչ տվյալներ | |
| [21] Ում միջոցով — Անուն, ազգանուն | |
| Լիազորագիր — Համար | |
| Լիազորագիր — Ամսաթիվ | |
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |

**[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը**

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ բնապ. հարկ | Այդ թվում՝ ճանապ. վճարի գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 55153818 բ/գ. | հատ | 1 | 39400 | | 39400 | | |
| Ընդամենը | | | | | | 39400 | | |

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093

(անունը, ազգանունը)

Ստացող

(անունը, ազգանունը)

13/09/2018 14:58:16

# ՈՐՈՇՈՒՄ

*Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին*

04 հուլիսի, 2018թ. — ք. Ալավերդի

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնի ավագ քննիչ Դ. Խաչատրյանս, վերանայելով վարույթիս թիվ 55153818 քրեական գործի նյութերը.

## ՊԱՐԶԵՑԻ

2018 թվականի մարտի 29-ին՝ ժամը 19:10-ին, Ալավերդի քաղաքի Ջրավազան 10 հասցեի տան սեփականատեր Հայկանուշ Մելիքյանի կողմից ոստիկանության Թումանյանի բաժնում տրված գրավոր հաղորդման վերաբերյալ փաստական տվյալներ են ստացվել, որ նույն ամսում Նաթելլա Բոշյանը և նրա դուստրեր Արուս և Արաքսյա Մելիքյանները, որդին՝ Հովհաննես Մելիքյանը, օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ իրենց ենթադրյալ իրավունքներն ինքնակամ /ինքնագլուխ/ իրականացնելով վնասել են Հայկանուշ Մելիքյանին պատկանող՝ Ալավերդի քաղաքի Ջրավազան 10 հասցեում գտնվող տան 2-րդ հարկի մուտքի դռան կախովի փականը, վերջինիս կամքին հակառակ ապօրինի մուտք են գործել տուն, բնակվել այնտեղ՝ պատճառաբանելով, որ նշված տունը պատկանում է իրենց և հրաժարվել են հեռանալ, որի արդյունքում էական վնաս է պատճառվել Հայկանուշ Մելիքյանին:

Դեպքի առթիվ նույն օրը ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 55153318 քրեական գործը, որը նույն ամսվա 09-ին ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժին:

Բացի այդ, 2018 թվականի ապրիլի 07-ին՝ ժամը 11:35-ին, Ալավերդի քաղաքի Ջրավազան 10 հասցեի առանձնատան սեփականատեր Հայկանուշ Մելիքյանի կողմից ոստիկանության Թումանյանի բաժնում տված գրավոր հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ստացվել, որ Հայկանուշ Մելիքյանի հորեղբոր նախկին կինը՝ Նաթելա Բոշյանը, և նրա դուստրերը՝ Արուս և Արաքսյա Մելիքյանները, նախորդ օրվա վկարումից հետո, 2018 թվականի ապրիլի 07-ին, օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգի խախտմամբ իրենց ենթադրյալ իրավունքներն ինքնակամ /ինքնագլուխ/ իրականացնելով, վնասել են Հայկանուշ Մելիքյանին պատկանող՝ Ալավերդի քաղաքի Ջրավազան 10 հասցեում գտնվող տան բակի, ինչպես նաև 1-ին և 2-րդ հարկի մուտքի դռների կախովի փականները, վերջինիս կամքին հակառակ ապօրինի մուտք են գործել տուն, բնակվել այնտեղ՝ պատճառաբանելով, որ նշված տունն իրենց է պատկանում և հրաժարվել են հեռանալ, որի արդյունքում էական վնաս է պատճառվել Հայկանուշ Մելիքյանին:

Դեպքի առթիվ 2018 թվականի ապրիլի 17-ին ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 55153818 քրեական գործը, որը նույն ամսվա 23-ին ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժին:

2018 թվականի ապրիլի 23-ին որոշում է կայացվել թիվ 55153318 քրեական գործը միացնել թիվ 55153818 քրեական գործին և նախաքննությունը շարունակվել է թիվ 55153818 համարի տակ:

Քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցների համակցության հիման վրա Նաթելա Բոշյանին ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրվել է մեղադրանք այն բանի համար, որ նա 2016 թվականի հունիսի 10-ի Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԼԴ/0286/02/16 վճռով Ալավերդի քաղաքի Ջրավազան 10 հասցեում գտնվող բնակարանի փրապեսման իրավունքից զրկված և նույն բնակարանից վտարված լինելով, 2018 թվականի մարտ և ապրիլ ամիսների ընթացքում պարբերաբար, միանական դիտավորությամբ, օրենքով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 417-րդ և

418-րդ հոդվածներով սահմանված կարգի խախտմամբ, այն է՝ նոր երևան եկած հանգամանքների հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման պահանջով դատարան բողոք ներկայացնելու փոխարեն, իր իրական իրավունքներն ինքնակամ (ինքնագլուխ) իրականացնելով՝ այդ կերպ փորձելով սեփական ուժերով վերականգնել «արդարությունը», Ալավերդի քաղաքի Ջրավազան 10 հասցեում գտնվող բնակարանի սեփականատեր Հայկանուշ Մելիքյանի կամքին հակառակ, բնակարանի մուտքի դռների փականները վնասելու եղանակով, բազմիցս ապօրինի մուտք է գործել հիշյալ բնակարան, բնակվել այնտեղ, տնօրինել ինչպես Հայկանուշ Մելիքյանին պատկանող բնակարանը, այնպես էլ բնակարանում առկա գույքը, այնուհետև, հրաժարվել է դուրս գալ բնակարանից՝ պատճառաբանելով, որ բնակարանը պատկանում է իրեն, ինչի արդյունքում էական վնաս է պատճառվել Հայկանուշ Մելիքյանի իրավունքներին և օրինական շահերին, որն արտահայտվել է վերջինիս կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը տնօրինելու և օգտագործելու սահմանադրական իրավունքից զրկելու ձևով:

Նախաքննության ընթացքում Նաթելա Բոշյանը դրսևորել է ոչ ադեկվատ և տարօրինակ վարքագիծ, մասնավորապես՝ կատարել է անհիմն, քրեական գործի հանգամանքներով չպայմանավորված և քրեական գործի հետ կապ չունեցող հայտարարություններ, առանց պատճառաբանության հրաժարվել է մասնակցել քննչական և դատավարական գործողությունների, առաջադրված հարցերին ըստ էության պատասխաններ չի տվել կամ տվել է այնպիսի պատասխաններ, որոնք որևէ առնչություն չունեն քրեական գործի նախաքննության հետ:

Նկատի ունենալով, որ քրեական գործի համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ պարզելու համար անհրաժեշտ են դատահոգեբուժական բնագավառի հատուկ գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-244-րդ, 246-րդ և 248-րդ հոդվածներով.

## ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ <<Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՊՓԲ ընկերությանը:

2.Փորձագետներին ներկայացնել սույն որոշման օրինակը, իսկ մեղադրյալ Ն.Բոշյանը և քրեական գործի նյութերը կներկայացվեն փորձաքննության կատարման օրը:

3. Պարզաբանման համար առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Նաթելա Բոշյանը հանցագործությունները կատարելուց առաջ, կատարման պահին և դրանցից հետո որևէ հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հիվանդությամբ, երբվանից, այդ հիվանդությունը կրել է խրոնիկ բնույթ, թե ոչ և արդյոք նա կարող էր գիտակցել իր գործողությունների վտանգավորությունը:

բ/ Հանցագործությունը կատարելու պահին Նաթելա Բոշյանն արդյոք չի գտնվել հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման վիճակում և նա կարող էր այդ վիճակում գիտակցել իր գործողությունների վտանգավորությունը և ղեկավարել դրանք, թե ոչ:

գ/ Նաթելա Բոշյանն մեղսունակ է, թե անմեղսունակ:

դ/ Նաթելա Բոշյանը հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հաստատություններում և պայմաններում, արդյոք բուժումը հակացուցված չէ:

Պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև առաջադրված չեն սույն որոշմամբ, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է նշանակություն ունենալ փորձաքննության փարժեքության ապահովման համար: Պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-339-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Փորձագետին նախազգուշացնել նրան տրամադրված քրեական գործի, նյութերի, իրեղեն ապացույցների պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրանց կորստի, ոչնչացման կամ հափշտակվելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված հնարավոր պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝ Դ. Խաչատրյան